«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳԻՐ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝** Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:

**Դաստիարակ՝** Թորոսյան Ֆլորա

**Մանկապարտեզ՝** «Ծիածան-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

Գյումրի 2023թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ..... 3

**ԳԼՈՒԽ 1**

**ԽԱՂԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ**

1.1 Դերային խաղեր ..... 4

1.2 Երեխայի խոսքի զարգացման կարևորությունը ..... 7

**ԳԼՈՒԽ 2.**

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

2.1 Հեքիաթի դերը նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեջ ..... 9

2.2 «Պապն ու շաղգամը» հեքիաթի ընթերցում ..... 10

Եզրակացություն ..... 12

Գրականության ցանկ ..... 14

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում: Խաղի ծագման, էության, երեխաների կյանքում նրա տեղի և նշանակության, առավել արդյունավետ օգտագործման և այլ շատ ուրիշ հարցեր՝ կապված խաղի հիմնահարցի հետ, հետաքրքրել ու շարունակում են հետաքրքրել ոչ միայն հոգեբաններին և մանկավարժներին, այլև փիլիսոփաներին, հասարակագետներին, ազգագրագետներին, կենսաբաններին և հոգեթերապևտներին: Երեխաների առաջատար գործունեության ձևը մինչ նախադպրոցական տարիքի ավարտը լցված է խաղով, որով և՛ զվարճանում են, և՛ սովորում, և՛ զարգացնում իրենց հմտություններն ու հնարավորությունները:

**Աշխատանքի արդիականությունը**: Թեման արդիական է մեր օրերում, քանզի այժմ հասարակության լայն շրջանակներն արդեն օգտվում են հոգեբանական ծառայություններից և հատկապես նախադպրոցական տարիքի երեխաներին հաճախ են տանում հոգեբանի մոտ այցելության: Իսկ այս տարիքի երեխաների հետ աշխատանքի լավագույն միջոցը խաղն ու խաղաթերապիան է: Մանկապարտեզներում, դպրոցներում, մանկական զարգացման կենտրոններում դասավանդողների պատրաստվածությունն այս թեմայով ևս շատ հրատապ ու կարևոր ենք համարում: Իսկ խաղաթերապիան խաղի կիրառումն է թերապիայում անձի զարգացման, հոգեշտկման, նևրոզների հաղթահարման, շփման հմտությունների ձևավորման, լարվածության թուլացման, սոցիալական դերերի յուրացման նպատակով: Կիրառվում է ինչպես երեխաների, դեռահասների, այնպես էլ մեծահասակների հետ:

**Հետազոտական աշխատանքի նպատակը**: Մենք նպատակ ունենք բացահայտել երեխաների մոտ խաղային թերապիայի ընթացքում հույզերի արտահայտման առանձնահատկությունները և օգնել նրանց ճանաչել իրենց հույզերը:

**Աշխատանքի խնդիրները**: Իսկ մեր նպատակն իրականացնելու համար մեր առաջ դրել ենք հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել նախադպրոցական տարիքը և նախադպրոցական գործունեությունը
- Ուսումնասիրել խաղի հոգեբանությունը և խաղաթերապիան
- Բացահայտել երեխաների հուզական վիճակը
- Բացահայտել երեխաների լիցքաթափվելու և դրական հույզեր ստանալու կարողությունները
- Բացահայտել երեխաների ագրեսիվության մակարդակը
- Բացահայտել դերային խաղի ազդեցության առանձնահատկությունները նախադպրոցականի զարգացման կարևորագույն փուլերից մեկում:

# ԳԼՈՒԽ 1

# ԽԱՂԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ

## 1.1 Դերային խաղերի

Նախադպրցական տարիքում գործունեության առաջատար տեսակը խաղն է: Խաղն առաջատար է դառնում ոչ այն պատճառով, որ երեխան որպես կանոն իր ժամանակի մեծ մասն անցկացնում է խաղալով և համեմատաբար քիչ է ներգրավվում մեծահասակների աշխատանքային գործունեության մեջ: Խաղը երեխայի հոգեկանում որակական փոփոխություններ է առաջացնում: Նրանում սաղմնավորվում են ուսումնական գործունեության հիմքերը, որը առաջատար է դառնում դպրոցական տարիներին:

Խաղալիս երեխաները ձեռք են բերում **համագործակցելու** մարդկային ընդունակություններ: Խաղի ընթացքում երեխան հեշտությամբ հասկանում է, որ իրական առարկան հնարավոր է փոխարինել խաղալիքով կամ որևիցե պատահական իրով, օրինակ՝ հացը կարող է փոխարինել քարով, մարդուն՝ ձողիկով: Նա ոչ միայն կարողանում է առարկաները փոխարինել միմյանցով, այլև առարկաները, կենդանիներին ու մարդկանց՝ իր անձով: Օրինակ՝ կրակում է հրացանից և ինքն էլ վայր է ընկնում գայլի փոխարեն, վարում է երևակայական շոգեքարշը և ինքն էլ իրեն շոգեքարշ երևակայելով, սուլում ու արագացնում է ընթացքը:

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում:

Խաղը շատ կարևոր է երեխայի զարգացման համար: Վաղ տարիքում խաղը երեխայի հիմնական գործունեությունն է: Խաղով է նա ճանաչում ինքն իրեն, աշխարհը, սովորում է խոսել, շփվել, պահպանել ընդունված նորմերը և այլն:

Խաղը զարգացնում է երեխայի ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, ստեղծագործելու կարողությունը, հաղորդակցման կարողությունը, շարժողականությունը, ակտիվությունը, ընկալումը, օգնում է արագ կողմնորոշվել, դրական է ազդում հիշողության վրա:

Խաղը՝ որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն, երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոցն է: Խաղի դերն ու

նշանակությունը նախադպրոցականի կյանքում դիտում են որպես երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման կարևորագույն միջոց: Ստեղծագործական խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումներն արտաքին աշխարհի հանդեպ, դրսևորվում են նախասիրություններն ու հետաքրքրությունները, զարգանում է նրանց երևակայությունը: Խաղերը կրթում, դաստիարակում և զարգացնում են երեխաներին:

Հայտնի է, որ նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեությունը խաղն է: Այն համարվում է առաջատար, քանի որ խաղի միջոցով տեղի են ունենում երեխայի հոգեկանի զարգացումը, ուսուցումն ու դաստիարակությունը: Խաղում դրսևորվում է երեխայի վերաբերմունքը շրջապատող աշխարհի, մարդկանց, առարկաների և երևույթների նկատմամբ:

Երեխայի խաղն ընթանում է խոսքի ուղեկցմամբ: Նա խոսում է նույնիսկ այն ժամանակ, երբ մենակ է խաղում:

Անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում **դերային խաղը:** Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում:

Երեխային շատ են անհրաժեշտ դերային խաղերը, դրանք նրան օգնում են նախապատրաստվել կյանքին ու հասարակությանը:

Այսպես՝ վաղ մանկության և նախադպրոցական տարիքի սահմանում ծագում են մանկական խաղերի առաջին տեսակները. օրինակ՝ զարգանում է պատկերավոր դերային խաղը: Նրանում երեխան երևակայում է ցանկացած մեկին, ցանկացած բանի նմանվում ու դրան համապատասխան գործում:

Դերային կամ ստեղծագործական խաղը ի հայտ է գալիս նախադպրոցական տարիքում: Սա այն գործունեությունն է, որում երեխաները իրենց վրա վերցնում են մեծահասակների դերերը և ընդհանրացված ձևով, խաղային պայմաններում վերարտադրում մեծահասակների գործունեությունը և նրանց միջև հարաբերությունները: Երեխան ընտրելով որևէ դեր, ունի համապատասխան կերպար՝ մոր, բժշկի, վարորդի և այլն: 1,5 տարեկանից փոքրիկը ընդօրինակում է այն,

թե ինչպես է մայրը լվանում ափսեները, ինչպես է պապիկը կարդում: Իհարկե ոչ բոլոր երեխաները կարող են կռահել ու խաղալ դերային խաղ:

Յուրաքանչյուր խաղ ունի իր խաղային պայմանները, նրանում մասնակցում են երեխաները, խաղալիքները և այլ առարկաներ: Եթե 3-4 տարեկանում երեխան խաղում է 10-15 րոպե, իսկ այնուհետև նա պետք է այլ բանով զբաղվի, ապա 4-5 տարեկանում մի խաղը տևում է 40-45 րոպե: Ավագ նախադպրոցականներն ընդունակ են միևնույն խաղը խաղալ մի քանի ժամ իրար հետևից, իսկ որոշ խաղեր շարունակվում են մի քանի օր: Այսպես խաղը զարգանում և նախադպրոցական տարիքի վերջում հասնում է զարգացման բարձր մակարդակի: Խաղի զարգացման գործընթացում առանձնացվում են երկու փուլեր.

առաջին փուլին (3-5 տարեկան) բնորոշ է մարդկանց իրական գործողությունների վերարտադրումը: Երկրորդ փուլում (5-7 տարեկան) մոդելավորվում են մարդկանց միջև իրական հարաբերությունները, խաղի բովանդակությունը դառնում է մեծահասակի գործունեության իմաստը:

Խաղը նախադպրոցական տարիքի առաջնային գործունեություն է, որը նշանակալից ազդեցություն է թողնում երեխայի զարգացման վրա:

- **Խաղը փոխգործուն և ինտերակտիվ է:**

Խաղալու համար երեխան պետք է փոխներգործի որևէ իրի կամ մարդու հետ: Գործողությունը փոխադարձ է, քանի որ անգամ իրերն են փոխգործում, երբ դրանցով խաղում են: Երբ երեխան որևէ բան է անում իրի, օրինակ՝ խաղալիքի, կամ մարդու հետ, այն հակազդում է, և երեխան համապատասխանաբար հարմարեցնում է իր հաջորդ գործողությունը, նա խաղում է: Իսկ երբ երեխան պասիվ դիտում է (օրինակ՝ հեռուստացույց) կամ լսում (օրինակ՝ լսում է ուսուցչին, որը ինչ-որ բան է բացատրում) նա չի խաղում:

- **Խաղն ազատ է, հանպատրաստից և ոչ հարկադիր:**

Խաղալու համար երեխան պետք է ցանկանա անել այն, ինչ անում է: Նա կարող է գործողությունն ինքն ընտրել ընտրած լինել, կամ ընդունի դաստիարակի առաջարկը, բայց նա դա պետք է ազատ ընտրություն լինի:

Օրինակ, ասենք՝ երեխան նկարում է: Եթե նրան ասել են՝ նկարի՛ր, և չեն տվել ընտրության հնարավորություն, ուրեմն նա չի խաղում: Եթե նա նկարում է, որովհետև

պարգևատրվելու է կամ վախենում է պատժվելուց, նա չի խաղում: Երեխան, որը հնազանդորեն գույներով է լցնում ուսուցչի տրված պատկերը, չի խաղում, անգամ եթե գունալցումը տրված է որպես ստեղծագործական աշխատանք: Երեխան, որը որոշել է խաղալ հատկանշական իրերով և դասակարգում է դրանք չափերով և ձևերով, խաղում է, չնայած դասակարգումը լուրջ նախաուսումնական ունակություն է:

- **Խաղը երեխայի համար հետաքրքիր է և հրաշալի:**

Խաղի ժամանակ երեխան կլանվում է այն բանով, ինչ անում է: Պատկերացրեք, որ **4**-ամյա երեխաները շրջան են նստել, երգում են և ձեռքերով **25** բոպե շարժումներ են անում: Գուցե դաստիարակի համար դա զվարճալի է, բայց շատ երեխաներ սկսում են ձանձրանալ: Նրանք իրենց տեղը հանգիստ չեն նստում, նայում են շուրջը կամ չուզելով են երգում: Այս երեխաները չեն խաղում: Այս խմբում երեխան, որը որոշում է կողքի նստողի գոտին կապել աթոռին, խաղում է, չնայած այդ պահի հիմնական գործունեությանը չի մասնակցում և կարող է նունիսկ դրա համար պատժվել:[1]

- **Խաղն անվերջ է և երևակայական, արտահայտիչ, ստեղծագործական:**

Երեխաների խաղի մեջ ճիշտ կամ սխալ պատասխաններ չկան: Նույնիսկ լավագույն դեպքում հաղթող կամ պարտվող չկա: Խաղի ժամանակ երեխաները կլանված են մի պրոցեսում, որտեղ նրանք ինչ էլ որ անում են (եթե վտանգավոր չէ իր կամ ուրիշների համար) ընդունելի է և նպաստում է գործունեության կարևորմանը: Մաքուր թղթի վրա նկարող երեխան խաղում է, իսկ համարակալված կետերը միացնելով պատկեր ստացող երեխան՝ ոչ: Կենդանուն ընդօրինակող երեխան խաղում է, համակարգչային ծրագրով կենդանիների նկարները համադրող երեխան թերևս չի խաղում: Ջրի շիթեր արձակող, նույնիսկ իրեն ոտքից գլուխ թրջող երեխան խաղում է, երեխան, որին դաստիարակն ասել է՝ ինչ անել ջրի հետ, չի խաղում:

Հիմնավոր ուսուցման համար երեխայի իրականացվելիք խաղը պետք է ներառի բոլոր այս **4** հատկանիշները. այն պետք է լինի փոխգործուն, հանպատրաստից և ազատ, երեխայի համար խիստ հետաքրքիր և անվերջ: Խաղը երեխայի համար կարևոր է և լուրջ: Խաղը երեխային հնարավորություն է տալիս զննել, ստուգել, զարգացնել մտքեր

[1] «Դպիր» մանկավարժական հանդես, Երևան 2007, էջ 11-14

և գաղափարներ, և փորձելով ու սխալվելով՝ սովորել: Խաղի մեջ սպասվելիք արդյունք կամ ճիշտ պատասխան չկա:

Ի վերջո, ինչպես հայտնի է, երեխայի աշխատանքը խաղն է:

## 1.2 Երեխայի խոսքի զարգացման կարևորությունը

Խաղը շատ մեծ ազդեցություն է գործում **խոսքի զարգացման** վրա: Խաղը լուրջ ազդեցություն է գործում մտքի զարգացման վրա: Խաղալիս երեխան սովորում է ընդհանրացնել առարկաներն ու գործողությունները: Խաղային իրադրության մեջ ներգրավվելը պայման է հանդիսանում երեխայի մտավոր գործունեության տարբեր ձևերի զարգացման համար: Դերային խաղը կարևոր նշանակություն ունի նաև հոգեկան գործունեության այլ ձևերի զարգացման համար: Երևակայությունը սկսում է զարգանալ միայն խաղի պայմանների ազդեցության տակ: Նախադպրոցական տարիքում խաղի բովանդակությունը որակական փոփոխություններ է կրում: Կրտսեր նախադպրոցականների խաղի հիմնական բովանդակությունն է կազմում առարկաների հետ գործողությունների վերարտադրությունը: Ավագ նախադպրոցականի խաղի բովանդակության մեջ էական է դառնում կանոններին հետևելը: Երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ էական նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը: Հայտնի է, որ երեխայի մտածողությունն արմատական փոփոխությունների է ենթարկվում, երբ նա ունակ է դառնում լեզվական հաղորդակցության և ուսուցումը նրան սովորեցնում է տիրապետել սեփական մտքերին (Լ. Ս. Վիգոտսկի):

Բանավոր խոսքը մարդու մտավոր կարողությունների կարևոր դրսևորումներից է: Բանավոր խոսքի զարգացումը տեղի է ունենում մարդու կյանքի ողջ ընթացքում և այն անընդհատ ենթարկվում է մշակման:

Երեխայի խոսքի զարգացումը նախադպրոցական մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Խոսքի շնորհիվ է տեղի ունենում նախադպրոցականի հոգեկան զարգացումը, սոցիալականացումը, ձևավորվում է նրա ներաշխարհը: Նախադպրոցական տարիքում խոսքի զարգացման խնդիրներից առանձնահատուկ կարևորվում են կապակցված խոսքի ձևավորումն ու զարգացումը, քանի որ կապակցված խոսքի միջոցով է իրականացվում լեզվի և խոսքի հիմնական

հաղորդակցման գործառույթը: Կապակցված խոսքը մտավոր գործունեության բարձրագույն ձևն է, այն որոշում է երեխայի խոսքային և մտավոր զարգացման մակարդակը:

Նախադպրոցական մանկության շրջանում երեխայի ամենակարևոր ձեռքբերումներից մեկը մայրենի լեզվին տիրապետելն է: Լեզուն միջոց է, որի օգնությամբ մարդիկ հաղորդակցվում են միմյանց հետ, փոխանակում մտքեր և հասնում փոխադարձ ըմբռնման: Երեխան բանավոր խոսքին տիրապետում է կյանքի առաջին մի քանի տարիներին: Նախադպրոցական հաստատության խնդիրն է զարգացնել երեխայի խոսքը: Խոսքի զարգացման ընթացքում շրջապատի հետ շփման, հաղորդակցության արդյունքում ձևավորվում են երեխայի խոսքային հաղորդակցական ունակությունները, զարգանում է նրա բանավոր խոսքը:

Նախադպրոցական հաստատություններում բանավոր խոսքի զարգացումն հենվում է լեզվի իրական գործառության վրա: Բանավոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով և կարևոր խնդիր է, երբ երեխային իր խոսքի նկատմամբ ներշնչում ենք վստահություն և տալիս հնարավորություն անկաշկանդ խոսելու և արտահայտվելու: Երեխայի համար պետք է ապահովել շփման ու հաղորդակցման համար լիարժեք պայմաններ:

Երեխայի խոսքը ամենից առաջ զարգանում է շրջապատի հետ հաղորդակցման ընթացքում, ուստի շատ կարևոր է, երբ երեխան շրջապատում լսում է ճիշտ և գրագետ խոսք: Գրագետ խոսք ունենալու համար պետք է ստեղծել նաև զարգացնող միջավայր:[2]

[2] Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2009, էջ 224-228

# ԳԼՈՒԽ 2.

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## 2.1 Հեքիաթի դերը նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեջ

Հեքիաթը բանահյուսական ժանր է՝ իր տեսակի մեջ յուրահատուկ: Այն չունի բովանդակային սահմանափակումներ, իր մեջ կարող է միահյուսել կախարդականը և միաժամանակ խրատականը, արկածայինն ու կենցաղայինը: Սովորաբար հեքիաթներում հերոսները և իրադարձությունները պատկերված են չափազանցված կամ այլաբանորեն, հաճախ էլ՝ հրաշապատում ձևերով:

Հեքիաթների ասելիքը շատ խորն է, հաճախ միանգամից անընկալելի. դրանք ունեն խրատական, ուսուցողական, դաստիարակչական նշանակություն: Հեքիաթներին բնորոշ են ժողովրդական պատկերավոր արտահայտությունները, չափազանցությունները, իմաստալից խոսքերը: Հաճախ էլ իրար են խառնված իրականն ու երևակայականը:

Հեքիաթներ լսելով և կարդալով, ինքնաբերաբար, ամբողջ հոգով կարեկցում ենք հերոսներին. տխրում ենք, երբ նրանք դժվար կացության մեջ են, ուրախանում ենք, երբ բարին հաղթում է, ու անհամբեր սպասում ենք, որ չարը պարտվի: Հեքիաթը մեզ սովորեցնում է բարություն:

Ներկայումս խոսքային խաղերը խիստ անհրաժեշտ են երեխաներին: Բանն այն է, որ կինոն, հեռուստատեսությունը, համակարգչային խաղերը ոչ միայն զարգացնում են երեխայի մտավոր ներուժը, այլև յուրօրինակ կերպով ստրկացնում են նրան: Դրանք կատարում են մեխանիկական գործողություններ, որոնք չեն անցնում սրտի և հոգու միջով:

Անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում դերային խաղը: Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում: Դիմացկունություն ցավի նկատմամբ, արժանապատվության, պատասխանատվության, վստահության և արդարության զգացում: Իր կյանքի ոչ մի փուլում երեխան չի սովորի այդքան շատ և արդյունավետ, քան իր մանկական խաղերի ընթացքում:

Հեքիաթի շարունակումը զարգացնում է երեխայի խոսքը, գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը և նպաստում է նրա ինքնակազմակերպմանը, ինքնադրսևորմանն ու ինքնարտահայտմանը: Հեքիաթը շարունակելով երեխայի մոտ ձևավորվում է հորինելու, նմանակելու հմտություններ, մշակում խոսքի կուլտուրան և հաճախ վերացնում է նաև երեխայի արտասանական կամ այլ բնույթի թերություններ: Տվյալ պարագայում երեխան ինքն իրեն դնում է հեքիաթի հերոսի տեղը և կարծես աշխարհին նայում է այն հերոսի տեսանկյունից, որի դերը կատարում է:

Հեքիաթների դերը երեխաների զարգացման գործում բազմազան է՝ սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում: Բոլոր հեքիաթների մեջ չարի և բարու պայքար կա, և այդ պայքարը միշտ ավարտվում է բարի ուժերի հաղթանակով: Հեքիաթի միջոցով պետք է սերմանել բարին ու լուսավորը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն երեխաները, որոնց փոքր հասակից սկսած հեքիաթներ են պատմել, ավելի վաղ են սովորում իրենց մտքերը ճիշտ արտահայտել: Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը և ստեղծագործական ներուժը: Մանկական հեքիաթները ընդլայնում են երեխայի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի զգացմունքային և պատկերավոր: Ձևավորվում է հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն:

Երեխաներն ընդհանրապես իրականությունը պատկերավոր են ընկալում, իսկ հեքիաթները նպաստում են իրականության ճիշտ ընկալմանը: Երեխաները հեքիաթների միջոցով պատկերավոր են ընկալում նաև չարն ու բարին: Հեքիաթներում միշտ հաղթում է բարին, ինչը երեխային օգնում է հաղթահարելու կյանքի դժվարությունները՝ ենթագիտակցությունում ունենալով բարու հաղթանակի գաղափարը: Նույն հեքիաթը երեխային կարելի է մի քանի անգամ պատմել, որպեսզի լավ ընկալի հեքիաթի բուն ասելիքը: Հեքիաթներն իրապես իրենց ազդեցությունն են ունենում երեխաների անձի զարգացման և կայացման վրա:

## 2.2 «Պապն ու շաղգամը» հեքիաթի ընթերցում

**Թեմա**-Համագործակցություն

**Խումբ՝** Միջին խումբ

**Տեսակը**-Հեքիաթի ընթերցում՝ «Պապն ու շաղգամը»

**Նպատակը**

- Կզարգացնեն գեղարվեստական ստեղծագործությունը լսելու, գնահատելու, հարցերին պատասխանելու կարողությունը, կապակցված խոսքը,
- կհարստացնեն բառապաշարը շաղգամ, համագործակցել բառերով:

**Մեթոդներ**

Անհատական, զույգերով, փոքր խմբերով, մեծ խմբով

**Նախապատրաստական աշխատանք**

Զրուցել փոխօգնության, համագործակցության մասին, ընթերցել Գեղեցիկ Մովսիսյանի «Արևիկի ժապավենը», Կ. Ուշինսկու «Երկու այծ» ստեղծագործությունները:

**Անհրաժեշտ նյութեր**

«Պապն ու շաղգամը» ռուսական ժող. հեքիաթի նկարազարդումները

**Ընթացքը**

**Խթանման փուլ**

Փորձեցի մենակ տեղափոխել խմբասենյակի մանկական սեղանիկներից մեկը և ձևացրեցի, որ շատ դժվար է, չեմ կարողանում: Երեխաներից մեկին խնդրեցի օգնել: Երեխան ևս դժվարացավ կատարել այդ առաջադրանքը: Խնդրեցի միանալ երկրորդ երեխային, հետո՝ երրորդին, չորրորդին: Միասին բռնելով սեղանի չորս կողմերից՝ սեղանը հեշտությամբ բարձրացրեցին և տեղաշարժեցին՝ դնելով մի տեղից մեկ այլ տեղ: Քննարկեցինք, թե ինչու սկզբում դժվար էր, իսկ հետո ավելի հեշտությամբ կատարեցինք առաջադրանքը: Ամփոփեցինք կատարվածը. մենակ դժվար էր, քանի որ սեղանը ծանր է, իսկ երբ օգնության հասան ընկերները, սեղանը կարողացանք տեղափոխել:

## Իմաստի ընկալման փուլ

Ընթերցեցինք «Պապն ու շաղգամը» ռուսական ժողովրդական հեքիաթը և յուրաքանչյուր իրավիճակը ներկայացնող՝ ամփոփ մտքին զուգահեռ ցուցադրեցինք հեքիաթի այդ դրվագին համապատասխան նկարը: Քննարկեցինք.

-Ի՞նչ էր ցանել պապը:

-Ինչո՞ւ պապը շաղգամը հողից մենակ չկարողացավ հանել:

-Ո՞ւմ օգնության կանչեց պապը:

-Ո՞ւմ օգնության կանչեց տատը:

-Ո՞ւմ օգնության կանչեց թոռնիկը:

-Ո՞ւմ օգնության կանչեց շնիկը:

-Ո՞ւմ օգնության կանչեց փիսիկը:

-Ովքեր օգնեցին պապին:

-Ինչի՞ մասին է հեքիաթը: (օգնության, համագործակցության, համերաշխության)

Հարցերի պատասխաններին զուգահեռ անդրադարձանք հեքիաթի համապատասխան հատվածներին՝ ցուցադրելով նկարները, և մեկ անգամ էլ արտահայտիչ ընթերցեցինք:

## Կշռադատման փուլ

Հետո ներկայացրեցինք ասացվածքներ միասնության, փոխօգնության, համերաշխության մասին և բացատրեցինք դրանց իմաստը:

Ձեռքը ձեռք կլվա, երկու ձեռքը՝ երես:

Օրվա երկրորդ կեսին երեխաների մասնակցությամբ բեմականացրեցինք «Պապն ու շաղգամը» հեքիաթը: Հեղինակի դերը ստանձնում էի ես՝ դաստիարակը:

**Տնօրենը, և երկու դաստիարակներ** դիտելով պարապմունքը միջին տարիքային խմբում, եկան հետևյալ եզրակացության, որ երեխաները գիտեն ասացվածքներ փոխօգնության, համագործակցության և համերաշխության մասին, բոլոր երեխաները գիտեին «Պապն ու շաղգամը» ռուսական ժողովրդական հեքիաթը, իսկ նրանցից առավել ակտիվները բեմականացրեցին հեքաթը: Պարապմունքի ընթացքում բոլորը ակտիվ էին, բայց միևնույն ժամանակ՝ կարգապահ և սիրով մասնակցում էին ընթացքին:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում, կատարելով ուսումնասիրություններ կարող ենք փասել, որ խաղը երեխայի կենսական գործունեության ամենից բնական ձևն է: Խաղի գործընթացում ձևավորվում է երեխայի և շրջակա աշխարհի միջև ակտիվ փոխներգործություն, զարգանում են նրա ինտելեկտուալ, հուզակամային, բարոյական որակները, ամբողջովին ձևավորվում է նրա անհատականությունը:

Արդյունքում՝ տեսագործնական ուսումնասիրության և վերլուծությա հիման վրա եկանք հետևյալ եզրահանգմանը՝

- խաղը հսկայական ազդեցություն ունի երեխայի զարգացման մեջ,
- Դերային խաղը հանդիսանում է արդյունավետ միջոց երեխաների վրա ներգործելու, նրանց մտավոր, հուզակամային ոլորտի, հաղորդակցության ոլորտի զարգացումը խթանելու համար:
- Խաղը ոչ միայն պարզապես զվարճանք է երեխայի համար, այլև այն միակ գործունեության ձևն է, որը թույլ է տալիս երեխային ազատ արտահայտվել, բացահայտել իրեն, իրեն լիարժեք զգալ, լիցքաթափվել, իրականացնել ցանկությունները, հաղորդակցվել, մոռանալ անհանգստություններն ու ազատվել վախերից:
- Նախադպրոցականի ցանկացած գործունեություն նախ և առաջ հիմնված է նրա հուզական վիճակի վրա: Դրական հույզեր ստանալու դեպքում երեխայի համար բոլոր բարդ թվացող խնդիրները հեշտ են և հաղթահարելի: Հակառակ դեպքում նա լարվում է, ագրեսիվ դառնում, ամեն ինչից տագնապում, մեկուսանում և անհանգստանում: Անբարենպաստ հուզական վիճակը կարող է հանգեցնել հոգեկան շատ լուրջ տրավմաների:
- Խաղը լավագույն միջոցներից մեկն է երեխաների հուզակամային ոլորտի խնդիրները լուծելու համար, քանի որ խաղի ընթացքում կոնկրետանում են բացասական հույզերը, դառնում առարկայական, որը նկատելիորեն հեշտացնում է դրանցից ազատվելը:
- Խաղը տալիս է նաև մեծ հնարավորություն ճանաչելու սեփական հույզերը և հուզակամային ոլորտի խնդիրները կարգավորել:

Այսպիսով, մեր այս աշխատանքը հնարավորություն տվեց նախադպրոցականներին սովորեցնել ճանաչել իրենց և այլոց հույզերը, կենտրոնացնել ուշադրությունը, զարգացնել մանր ու մեծ մոտորիկան, նաև լիցքաթափվել, խաղալով սովորել հաղորդակցման հմտություններ։

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ջանի Ռոդարի «Ստեղծագործական երևակայության քերականություն», էջ 25-27
2. «Դպիր» մանկավարժական հանդես, Երևան 2007, էջ 11-14
3. Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2009, էջ 224-228
4. Նախաշավիղ (2010թ.), էջ 5-7
5. Ծննդից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ, «Պինտերեստ» տպագրատուն, էջ 54-58
6. Сухомлинский В.А. пед.соч.-М., 1979.-Т.1-С.183.
7. Запарожец А.В. Психология восприятия сказки ребенкомдошкольником. «Дошкольное воспитание». М., 1977, с. 23.